


ՊԱՏՄԱՆՔ

Տարեկան գին կ'ըզուր չորս 10 ԲՆԸ.
Գաւառաց 2 Լիր
Վեցամս . կ' Պոսոյ . 5 ԲՆԸ.
Գաւառաց . 1 Լիր
Օտար երկիրներու . 50 ՁԻ.
Շանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուչ, երկու անգամի հա-
մար 2 դրչ 5. աւելի անգամներու
համար գատ սահարիւթիւն կըլ-
այ :



Լ Ե Մ Ք Ի Դ

Հ Ա Ն Ա Պ Ա Զ Օ Ր Ե Ա Յ

ՊԱՏՄԱՆՔ

Գուրս զնացած իրազբայ ճանրու-
ծախքը իրազբայ թեան վրայ է :
Լրացրոյ վերաբերեալ ճամազ
կամ որ և իցէ դրու թիւն իրազբայ
- ճնորհին պիտի ուզուի : Ղաւա-
թիս Սանարքըլար շատակի թիւ
198, Նորո խան, Մասիսի գրասեն-
եակը

Ճանրու ճանրը չվճարուած նա-
մակ չի կրնա խոսիլ :
Չտարուած նամակ, յօդուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆՊՈՒՊՈՒԼԻՍ 30 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ երեսփոխանաց ժողովին
մէջ Պ. Վատինկիթօն ներկայ քաղա-
քական վիճակին վրայ ատենախօսեց,
ուր գլխաւորապէս Յունաստանի սահ-
մանաց, Ռուսմանիոյ Հրէից և Եգիպ-
տոսի խնդիրներն հետզհետէ աչքէ
անցուց : Արտաքին գործոց նախա-
րարը Գաղղիոյ աշխարհավարութիւնը
բացատրելով ըսաւ թէ տարիէ մ'ի
վեր դիւանադիտութեան բոլոր գոր-
ծողութիւնը Պէրլինի դաշնագիրը գոր-
ծադրելու վրայ կայացած էր : Գաղ-
ղիոյ լիազօրները վերհաստատուին մէջ
պաշտօն ունէին Եւրոպիոյ յիշեցնե-
լու թէ ուրիշ քրիստոնեայնեան և ու-
րիշ ազգեր կան Պալքանեան թերա-
կղզոյն մէջ Պոլսոյ վրայ չափ Եւրո-
պիոյ համակրութեան արժանի : Լի-
ազօրներն այս պաշտօնը կատարեցին :
Շատ ժամանակէ ՚ի վեր Գաղղիոյ Ա-
րևելեան Միջերկրականի քրիստոն-
եայնեան և նախ քան զամենայն Յու-
նաստանի իրեն բնական պաշտպա-
նութեան ներքև կը համարէ և այն
«իւրքը թագաւորութիւն» հիմնելու
աջակցած է :

Պ. Վատինկիթօն Հելլենական ազ-
գին վրայ բարու գովեստ շուայլեց .
յայտարարեց թէ Գաղղիոյ աշխար-
հավարութիւնն ու շահը կը պահան-
ջեն Յուն ազգին զորքացման օգնել,
որ մեծ յատկութիւններ ունի, և որ
միայն թերևս բոլոր Արևելեան Մի-
ջերկրականի մէջ կարող է մինչև Ա-
րևելից հեռուստը կողմերը (Չինաս-
տան և Քոչին) լրել կուգէ) Արև-
մուտեան դաղափարներն ու օրէնքնե-
րը տարածել : Այս է եղեր Յունաս-
տանի համար Գաղղիոյ համակրութեան
ստորդ պատճառն :

Հելլենական կամ յունական ազ-
գին քաղաքակրթական յատկութիւն-
ները չեն կրնար ժխտուիլ, սակայն
կարծեմք վիպասանական չափազան-
ցութիւն մ'է Արևելից մէջ մի միայն
Յունները կարող համարիլ քաղաքա-
կրթութիւնը ծաւալելու : Անշուշտ
կան ուրիշ ազգեր, որք Յունաց չափ
ընդունակութիւն ունին քաղաքա-
կրթութեան, և արդար չէ մի մի-
այն անոնց վերապահել այդ յատկու-
թիւնը : Հայերն Արևելից մէջ տասն
և չորս կամ տասն և հինգ դար ա-
ռաջ Յունաց հետ կրնային մրցիլ քա-
ղաքակրթութեան մասին, զոր ամե-
նայն փութով կը ծաւալէին իրենց
շուրջը, եթէ բաղդին հարուածոյ
ներքև չընկնէին, ինչպէս Հելլենք և
նայն իսկ Եւրոպացիք ալ ընկնեցան :
Ո՛րք է ուրեմն Հելլենաց առաւելու-
թիւնն : Եթէ ազատութեան սէրն է,

նոյնը տիրած էր նաև Հայոց սրտե-
լուն մէջ, որոց քաղաքակրթութեան
ժամանակի պատմութիւնը բռնաու-
րութեան տիպար մը չներկայեր, այլ
ազատ երկիր մը կը ցուցնէ :

Հ. Օրմանեանի տնցեալները խօ-
սած մէկ ատենաբանութիւնը կը հաս-
տատէ պատմական խորհրդածու-
թեամբք թէ Հայութեան ոգին տա-
րակերպութեամբ էր, և դժբաղդա-
բար երբեմն այս տարակերպութեան
ցումը մինչև իսկ ՚ի վրաս կեդրոնին
յառաջ կերթար, որ գուցէ Հայու-
թեան անկման ներքին պատճառնե-
րէն մին կրնայ համարուիլ, և մինչև
ցայսօր «անմիաբանութիւն» բառով
ճանչուած է : Բայց այս ստորդ է որ
ամեն ժամանակ երբ Հայն ևս նպաս-
տաւոր պարագայներ դատած է, կըր-
ցած է յառաջդիմութեան և քաղա-
կրթութեան մասին ընդունակու-
թիւնը հաստատել, և առանց սարք-
կութեան, ժամանակաց յատկի բա-
րուց ապրկանութեան և նուազատա-
խոհութեան, կրնայ դարձեալ Եւրո-
պայի համակրութեան արժանի ըն-
դունակութիւններու կարողութիւն
ցոյց տալ :

Պ. Վատինկիթօն Հելլենական խնդ-
րոյն մէջ Գաղղիոյ ընթացքը բացատ-
րելէ ետև, որ էր Պէրլինի դաշնագր-
րին 24 դ. յօդուածին գործադրութի-
ւնը, յայտարարեց թէ վերհաստատուին
նպատակն Օրմանեան կայսրութիւնը
քանդել էր, այլ անոր խորհուրդ-
տուած էր փոխալ անդամները կըր-
րել, որպէս զի մարմնոյն մնացեալ մա-
սն ապագայ հարուածոց դիմադրե-
լու առաւել կարող լինի, քան զի տա-
կաւն աշխարհայն ամենէն գեղեցիկ
պետութիւնը կազմելու տարրները
կը մնային : Օրմանեան քաղաքացիե-
աներէն նոքա՝ որ իրենց երկրին ամե-
նէն մեծ գործերուն մէջ գտնուած
էին, կը հասկնային այս խորհուրդնե-
րն, և իրենցմէ մին կըրնէր թէ պէտք
է փութով քաղաքական խնդիրները
վերջացնել և ներքին վարչութեամբ
դրալիլ, քանի մը տարի ամենէն
թուրքիոյ վրայ խօսիլ յատուիլ :

Ռուսմանիոյ մէջ իրականաց և Հրէից
համար Եւրոպա կատարեալ քաղա-
քային հաստատութիւն պահանջած
էր, և Պ. Վատինկիթօն կը յուսայ թէ
այս խնդիրն ՚ի մօտոյ կը կարգադրի-
լիս և Անդրիա համաձայնած էին
երկրական կանոնաւորութիւն մըտ-
ցնելու, և Նուսար փաշայի նախա-
դաշութեամբ նախարարութիւն մը
կազմուած էր : Պ. Վատինկիթօն ըսաւ
թէ Նուսար փաշա իրատ լաւ նա-
խարար մ'եղած էր, սակայն կանո-
նաւորութիւնն իմացիլ փաշային գոր-
ծին չէր դար, և ատոր համար Եւ-
րոպական նախարարութիւնը տապա-
լեց : Գաղղիա և Անդրիա այն ատեն

համոզուեցան թէ քանի որ այս իշ-
խանը գործոց զուլը գտնուի, Ե-
գիպտոսի ելուստաքը կանոնաւոր
վիճակի մէջ պահել և Արևմտեան տե-
րութեանց հպատակներուն ընդար-
ձակ նիւթական շահերը պաշտպանել
անկարելի էր . ուստի իմացիլ փաշա-
յին անկումը որոշեցաւ և ՚ի գործ
դրուեցաւ : Պ. Վատինկիթօն յարեց
թէ Արևմտեան տեղութիւնք 1866ի
և 1873 Ֆէրմաններուն շնորհած ար-
տօնութիւնները պիտի պահպանեն,
զորս Եգիպտոս մեծամեծ զոհողու-
թեամբք ձեռք բերած էր :

ԲԱՐԵՆՈՐՈՂՄՈՒՆԻ Ի ԹՈՒՐԿԻԱ

Արևմտեան Արևելի Երեսփոխան-
ութիւնը 22 Նոյեմբ
(Նար. տես թիւ 2587)

Պ. ԿԼԱՍՏՈՒՆ խնդրոյն կարևո-
րութիւնը յիշեցնելով, կըսէ թէ ծի-
ծարկական բան մը պիտի լինի կէս
գիշերէն յետոյ ընդհանուր վիճարա-
նութիւն մը բանալ անոր վրայ : Պ.
Կլաստիթօն մեծ ցաւ կ'ըզայ Սըր Հ.
Տ. Ռեօֆի այն յայտնութեանց վրայ
թէ քրիստոնեայք բռնութիւններ
գործած են մահմետականաց և թուր-
քաց վրայ, բռնութիւնք՝ որք եթէ
իրապէս քրիստոնեայք կողմանէ անոնց
վրայ գործուած են՝ աւելի գէշ են
քան թուրքաց և մահմետականաց
կողմանէ քրիստոնեայք վրայ գործ-
ւած բռնութիւնները . բայց վերջա-
պէս ասոնք քննութեան կարօտ բա-
նէր են, որոց վրայ Պ. Կլաստիթօն չը
կրնար դադարաւոր յայտնել : Կը յայտ-
նէ թէ ինք և ընդդիմադիր կուսակ-
ցութիւնը մեծ համակրութեամբ և
գոհութեամբ մտիլ ըրած են Սըր Հ.
Տրեփիմա Ռեօֆի բանախօսութիւնն,
որ թէև պահպանողական երեսփոխա-
նի մը կողմանէ կարտասանուէր, սա-
կայն պահպանողական կուսակցու-
թեան անդամաց շատ հաճելի չթուե-
ցաւ : Պ. Կլաստիթօնի համար դժուար
է դուշակիլ թէ Սըր Հ. Տ. Ռեօֆի
բանախօսութիւնն ինչադեցուցութիւն
ըրած է Պ. Համբուրի վրայ . որով-
հետև այդ բանախօսութիւնը, թէև Պ.
Համբուրի բարեփոխեալ առաջար-
կութիւնը պաշտպանելու համար ար-
տասանուած էր, այսու ամենայնիւ
աւելի Սըր Չարլզ Տիլքի առաջարկու-
թիւնը պաշտպանեց : Այդ առաջար-
կութիւնը կը հրաւիրէր երեսփոխա-
նական ժողովը ապաշել վերջ, թա-
գուհոյն որ Պէրլինի դաշնագրին
թուրքիոյ բարենորոգմանց վերաբեր-
եալ մասանց գործադրութեան հա-
մար իւր ազդեցութիւնը բանեցնէ :
Այս նկատմամբ Սըր Հ. Տ. Ռեօֆի յայտ-
նեց թէ ժողովին կողմանէ կարծեաց
զորնդ արտայայտութիւն մը խիստ

փախարելի է թուրքիան բարենորոգ-
ման շաւղոյն մէջ յառաջ մղելու հա-
մար :

Հոս Պ. Կլաստիթօն Հելլենական
խնդրոյն վրայ Պ. Համբուրի դէմ կը
խօսի, և կը շարունակէ այսպէս :

« Պ. Համբուրի ըսաւ թէ վերջին
ժայր անիրաւութիւն է թուրքիոյ ժո-
ղովուրդն հարուածել, որ շատ բա-
րի է, թէ և փաշաները շատ գէշ են,
մոռնալով անշուշտ թէ փաշաներն և
կառավարութիւնն էին որ կը հար-
ւածուէին և ոչ թէ ժողովուրդը :

« Պ. Համբուրի տասն երկու ամ-
սուան միջոցի մէջ թուրքիոյ վերածնե-
լու անհնարութիւնն յայտնեց և բա-
րենորոգման ճանքուն մէջ թուրք կա-
ռավարութեան ըրած ինչ ինչ ձեռ-
նարկներն յիշեց : Երբ պատուարժան
երեսփոխանը ճիշդեթ փաշայի վրայ
կը խօսէր, մեր միտքը ձգեց աշխար-
հի ամենէն . . . մարդերէն մին, որոյ
նկատմամբ Անգլիոյ կառավարութիւնն

հանդիսաւոր կըրելու յայտարարեց
թէ գործած ոճիրները սաստիկ պատ-
ժոյ արժանի էին . (Գրեք քէ, Գրեք
քէ) Եւ սակայն այդպիսի մարդ մը
կը փաղարջուէր, բարձր պաշտօննե-
րու կը կոչուէր, խռովեալ դաւառ-
ներ կը զրկուէր և հաղարար մարդ-
կանց երջանկութիւնը կամ թշուա-
ռութիւնն որոշելու իշխանութիւն
կըրգուէր . . . այն փաշաներուն
կողմանէ, որոց համար Պ. Համբու-
րի կըսէր . « Աստուծոյ սիրուն հա-
մար, մի ներդք դաննք » : (Գրեք
քէ, Գրեք քէ) Եւ երբ պատուարժան ե-
րեսփոխանը Միտհաթ փաշայի վը-
րայ խօսեցաւ, թուրքիոյ Բայանե-
րուն համար ամենէն թշնամի և սար-
սափելի անձերէն մին յիշեցուց մեզ
ըսաւ թէ Սուլթանը Միտհաթ փա-
շան հինգ տարուան համար անուա-
նած էր : Սակայն Միտհաթ փաշային
հինգ տարուան համար Սուրբիոյ կու-
սակալ անուանիլը կամ շահուանիլը
բնաւ սպառնց մը չէ թուրքիոյ բա-
րեկարգական միամանց : Պ. Համ-
բուրի Ֆոթիապէս պէյնի կիրիսի կու-
սակալ անուանիլն ալ յիշեց . բայց ես
(կըսէ Պ. Կլաստիթօն) կը կարծեմ թէ
Ֆոթիապէս պէյ անդառնալի հան-
դամանք մ'ունեցող պաշտօն մը չէ
ընդունած : Եթէ Ֆոթիապէս պէյ յի-
այդպիսի պաշտօն մը յանձնուած լի-
նէր, կրնար լաւ կառավարիչ մը լի-
նիլ, բայց ես ապահով ազգերէն ան-
դեկութիւն առած եմ թէ իւր պաշ-
տօնավարութիւնը Սուլթանին և փա-
շայից հաճոյքէն կարեալ է :

Պ. Համբուրի թուրքիոյ կատա-
րած դատական բարենորոգմանց վը-
րայ խօսած լինելով, Պ. Կլաստիթօն
1866 մահմետական եղող 183 դատա-
կան պաշտանատարաց անուանումը
կը յիշէ, և կը հարցնէ թէ բարենա-
րող ո՛ւմ է այս : Թող, կըսէ, պա-

առաջադրուի, որք կարծես օրերով պատահաւ մի հայ չէին կեցած, բայց այս մասին տագնապելոյ տեղի չկայր տեղական հասարակութեան համար, նորա իւրեանց զէնքերն ունէին, և քաղաքիս քրիստոնեայք բաւական հարուստ էին այս նօթութիւնն յազեցնելոյ համար: Այս մասին բարեբախտաբար և ոչ մէկուն հայուն սրտայ էր, ոչ կառավարութեան՝ իւր անփոյթութեան մէջ, և ոչ այլ մերն մեր վարկերուն մէջ: Անոյս 14 թիւ էր, և անս 98 թիւ չորս զինեալ զայլ ժամանակն շուկան կը կոխեն զիշերուն մէջ, բոլոր պահապաններն կը կապեն, և կոխին կրկիններն պարպել սոյն միջոցին Պ. Թորոսեան, որոյ տունը հոն մերձ էր, աւագակաց աղմուկէն կ'արթննայ և դուրս կը նետուի տակաջն աւաղակը արդէն խիստ ճարտար իւրեանց արուեստին մէջ՝ նետի արագութեամբ կը նետուին Թորոսեանին վերայ. Թորոսեան կը դուշակէ վտանգն և կ'սկսի փախչիլ, այլ մեղք որ աւաղակաց եօթն հաս գնտակներն կը կանխեն զԹորոսեան. կ'իջնայ խեղճն և կը թռուայի իւր արեան մէջ... չորս ժամ վերջը խուսն բազմութիւն մի՛ Հայ և Թուրք՝ նորա յուրս դիակին շուրջն բայրօթած այս հեղ և բարեհամբայք երիտասարդին մասն կ'ողբային...

Տէր խմբագիր, այս սե տողերն զոր Ձեզ կը գրեմ, վստահ եմ որ վըշտօք պիտի լեցնեն ամեն բարի քաղաքացւոր սիրտ. զի Թորոսեան էֆէնտի, դեռ երիտասարդ, մեռաւ իբրև բարի քաղաքացի, այլ սակայն այս սե տողերուն մէջ սիրտս և միտքս կարևոր մաս մի կը գրաւեն, ընդ որ չեմ կարող անցնիլ առանց վայրկեան մի կանկ աւենելոյ:

Կենդանի ապացոյցներ, զորս տեսանք վերջին երեք դժբախտ տարիներու շրջանայ մէջ, խորամտահաս մտաւ մի ձգեցին ամեն ողջ մտաց մէջ, թէ կառավարութիւնն շատ լաւ բան մի ըրած չէր Ռուսիայէն արտաքսեալ բարբարոս ցեղերն իւր երկիրն ընդունելով, մանաւանդ որ կառավարութիւնն իւր գինեղանիսն և վարչական մարմնոց մէջ պէտք եղած հաւասարակութիւնն բոլորովին կորսնցուցած էր յորձ հետէ « Ե՛կնիչներութիւնն » վերջու հանգուցեալ Օգոստ. Սուլթան Մահմուտ խորմատա կայսեր օրով: Մեծն Ռեշիտ բաչայէն վերջն, սրտ վեղիբութեան ժամանակ թանձր արդիտութիւն մի կը պաշարէր Թուրքիան դժբախտաբար, կը համարձակիմք անժխտելի վստահութեամբ ըսել՝ թէ Թուրք նախարարաց մէջ չեղեցաւ բնաւ անձ մի, որ այն մեծ մարդուն (Ռեշիտ բաչայի) շաղագն հետեւէր, այսինքն փորձ փորձէր երկիրն բարեկարգել՝ նեղուկ ունենալով իւրեան այնպիսի լաւ տարր մի, որոյ ներքին շահերն միտիպէին լայն անմեկին կերպով կ'անալ Թուրք տարրին հետ: Այլ այս տարրը քրիստոնեայ էր: Մեծն Ռեշիտի ժամանակաւն նախարարութիւնն արհամարհանօք մտիկ կընէր այդ տարրին մասին նորա ըրած այն խօսքն. « Հայը մեր գանձն է, և եթէ իւր հաւատարմութեան համար երաշխաւորութիւն մի կուզէք, ես պատրաստ եմ անձս գրաւ դնել »:

Մեծն Ռեշիտի Հայոց հաւատարմութեան մասին ըրած վկայութիւնն ունեն Թուրք պաշտօնեայ անապարեց մասնաւոր փայլով մի ընդունելով այնպէս որ քիչ ժամանակուան մէջ ի շնորհս հայկական միջակ և թոյլ գիւտնադատութեան՝ առակ մի դարձաւ Թուրք շրթանց վերայ այս հայկական հաւատարմութիւնն, և ոչ սք

յիշեց « Հայը մեր գանձն է » խօսքն, և չը գիտենք ի՞նչ անձանօթ խորհուրդ մի կրնար ծածկեալ լինիլ այս բռնադրօնեալ զանցառութեան տակ:

Տէր խմբագիր, ես չեմ ուզեր հոս կանկ աւենել և մի առ մի քրննել ոչ այս բռնադրօնեալ դանցառութեան պատճառներն և ոչ այն անձանց արարքն, որք մէկ կողմանէ մինչ ֆրանսական փայլուն սակայն անվարձան աշխարհակարութեան մի թուիշերու վրայ յեցած իբրև քաղաքացեալ կը փայլէին, միւս կողմանէ բարենորոգման պատրուակաւ Եւրոպայէն միլիոններ կը կրկնէին, որք առանց արքունի գանձն մտնալոյ կայառէին, իւրեանց անփոյթ ընթացիւքն երկրին յոսի վարչութիւնն կը քաջաշնչէին, որով և պատճառ կը լինէին հեռ և առեւտրութիւն սիւնել Թուրք և քրիստոնեայ տարբերաց մէջ, երկրին երկու հօր տարբերաց մէջ տիրող այս դժգոհ վիճակն դպրոցէն դեռ նոր ելլող պատանայ մի աչքին իսկ կընար դարնել և դէշ հետեւանքներ անմիջապէս դուշակել սոսկ այնմ, ըստ ուրում հայտարար տարիներու պատմութիւնք հազարաւոր օրինակներ կուտան մեղ վկայող թէ ներքնապէս պառակտեալ աշխարհի մի անկուսն անխուսափելի է, Բայց և այնպէս երբէք Թուրք պաշտօնեայ մի այս մասին ուշադրութիւն չըրաւ: Եզան բարձրատիճան նախարարք որք իւրեանց ձախորդ քաղաքագիտութեամբն առաւել ևս քաջալերեցին Թուրք և քրիստոնեայ տարբին մէջ տիրող առեւտրութիւնն. Թուրքին գանձն եղող և ներքին շահերով յաւիտեան անբաժանելի կերպիւ Թուրքին կցեալ Հայուն սրտին մէջ արմատացեալ սրբազան յիշատակներն սրբապաշտելի ջանացին. նկատեցան վայրագ ցեղի մի անուամբ մկրտել այնպիսի դաւառ մի, որ իւր մէկ հին և փառաւոր թագաւորին անունն կը կրէր, և որոյ յառաջ ամեն Հայու սիրտ անհաւն և անհամար յիշատակօք կը դողայ տերեւի պէս և կը յուզուի: Մեր մեր սոյն տխուր խորհրդածութեանց շարքին հետեւած ժամանակնիս չեմք կրնար չհրճուիլ երախտագիտութեամբ մեր երիտասարդ վեհապետին լուսաւոր և աշխարհայէն բարձրացող վերայ, բայց միւս կողմանէ ևս չեմք կրնար մեր զարմանքն բռնել այն աշխարհակարութեան վերայ որ մինչ ցայտօր ի գործ կը գրուի: Թուրքը այսպէս փորձերէ վերջը դեռ չէ կարող ճանշնալ զՀայն, բարբարոս Աճառայինը ըզլ կը լեցնէ այն երկիրներն, ուր քրիստոնեայք և Թուրք եղբայրարտոր կապրէին, և այսպէս նոցա մէջ գըժտութիւն սփռելու պատճառ կուտայ՝ քրիստոնեայ սրտերն նորմար վշտերով բռնաւորելով: Կատարութիւնն մինչ ցայտօր ինչ կրցաւ շահիլ Ձեր քեզեզն ընդունելով, և ի՞նչ պիտի կրնայ շահիլ Աճառայիններն ևս ընդունելով: Գաղթականութիւնն իւր օգուան ունի այն ատեն երբ երկիրն զօրաւոր և հարուստ է: Թուրքիա՝ հիւժեալ իւր դժբաղդութեան միւրն կը քամէ այսօր. ուստի այս գաղթականութիւնն ուրիշ բանի մը չպիտի ծառայէ, բայց միայն դժգոհութեան նորոգ պատճառներ հայթայթել Թուրք և քրիստոնեայ տարբերաց մէջ և այսպէս երկիրն աւելի տխուր վիճակի մի դատապարտել:

Տէր խմբագիր, յետ խնարհաբար ընեալ սոյն դիտողութիւնքս, ինձ այլ ևս ուրիշ բան չմտայ: Բայց միայն բարեմայթութիւն մի մեր թշուառ երկրին բարեկաւութեան

համար, և խեղդել ի Ձէնք որ բարեհասիք ներկայիս տեղի մի չնորհել Ձեր պատուական թերթին մէջ:

Գ. Խ. Պիւլտիւն

Իրեւանի վերջնայ քաղաքի իրեւան

Խմբագրատեալ Ազնի Մասեաց օրագրոյ,

ի սէր Հայութեան հետեւալ փոքրիկ հրատարակութիւնն ազգանուէր մտաւկայ թերթեանք միոյն մէջ հիւրընկալել հաճեցէք:

Տեղացի ազգային վիճակը, ինչպէս որ ծանօթ է ընդհանուր հայրենեացս, երկար ժամանակեայ խաղաղութիւնը ու երկարաւիտութիւնը գրեթէ անհետացան: Նորմալի Գեր. Սորէն արքեպիսկոպոս սրբազան հայր հովիւր ամենայն օրինաւորութեամբ ու գործունէութեամբ կը շարունակէ իր պաշտօնը:

Ամեն օր սպասմանիսն ու նշանաւոր հիւրեր կընդունի և փոխադարձ անոնց այցելութիւններ կըրայ: Կրօնական ու ֆրադաքական և Խառն ժողովները անընդհատ իրենց նիստերը կը կատարեն:

Նորին Գերապատուութիւնը, ազգային ծանրածանր և բազմազան խնդիրներէ պարտաւճ ոյնտիս անդուլ և անձանձիւր կը գործէ, որուն առջին գործը եղաւ հինգ զարդերը միացընելով բոլորն այ ազգային ըստի, և Ռուսաւանիս խորհուրդ մը հաստատեց, վարժարանները բարձրելու, գոտոտարակութեան ու ուսուցման ընթացքը ըստ կարի զարգացնելու, մեթոտները կատարելագործելու, նոր ու գնադան ուսմանց դասեր հաստատելու և և: Առաջով ենք որ քիչ ժամանակէն զգալի յատաճակութեանց պտուղները պիտի վայելնք:

Վարժարանները միացնելէ ետքը, աւանդուելիք ուսմանց մէն մի ձեւերու համար դատ գաս դասատուներ և օգնականներ կարգեց: Ռուսաւանիս 2 դասատու, մէկ կատարարչ, այնպէս ևս ընտելարանին և Գաղկոցին:

Օն Երեսացիք, Միթիարեան Խորէն սրբազանի մասնաւորած շատ մէջէն ընթանալով՝ միացուցէք սրտերնիդ, տուէք ձեռք ձեռքի զարդերուն համար ամեն կերպով ձեռք ձեռք չնայելու, և գոհացուցիչ ամառական տուէք, որպէս զի գոհացուցիչ արդիւնք պահանջելու ալ իրաւունք ունենաք:

Եւ դուք, դատարաններ, զրացէք ձեր պատճառի բարձրութիւնը. դուք կոչուած էք մեր ազգին կեանքը յեղափոխել (տղէտ և փթալիտ դաստիարակներու չէ խօսքս) ընկերութիւնը նորոգել, անհաւն ինամօք և զգուշութեամբ ուսուցնէք ձեր աշակերտաց ինչ որ կը կարօտին կենաց պատրաստելու մէջ յաղթանակ տանելու համար:

Ահա միայն այսպիսի մշակեալ դաստիարակութեամբ է որ Հայ ազգին ապագայն պիտի լուսաւորի և ուսման ճաշակը ընդարձակի: Արով մեամ...

78 յունիս 19 Ա. Յ. Բ. Երեւան

Ի վան 16 յունիս 1879

Խմբագիր տղադուտ Մասիս օրագրոյ.

Ժամանակէ մ'ի վեր վան սկսած է շարժիլ, և այս շարժման մեծ դարկ կուտան ընկերութեանց կատարած հանգէսները՝ որ շատ սիրելի դարձած են հասարակութեան:

Խնամատար ընկերութիւնը՝ որ կազմուած է 15 յունիս 1878 թշուառները խնամելու և որք ու աքցան մանուկներու մէջ ձրիապէս կրթութիւն տարածելու նպատակաւ, ամայս 10 թիւ յիշատակ Մեծին Ներսիսի հանդէս մը կատարեց: Ընկերութիւնն յառաջագոյն նկատած լինելով՝ թէ հացի թանկութիւնը բազմաթիւ ընտանեաց թշուառութիւնը կատարեալ կը գործէ և իւր երկնական վիճակը չնեղեր այդ թշուառներուն գոհացուցիչ նպատակներ անել, որով ձեռք առնալ զայնոց ձեռնտուութեան զինիւ, Ռուսի սոյն հանդիսի ներկայ եղանակը հըրա-

ւիրուցան իրենց քսակները բանալ ի մը խիթ արուժիւն ճամարիտ կարօտելոց: Սոյն հրաւերին փութացին իրենց սրտաշարժ ատենախօսութիւններով արձագանք տալ վսեմ. Մկրտիչ էֆէնտի Արաբօս, Արմանապատի Հայր Ղևոնդ Փիրղալէմեան, Արարատեան մեծանուն ընկերութեան ներկայացուցիչ՝ բարեհամբար Մկրտիչ էֆէնտի Փորթուգալեան և ուրիշ ատենախօսներ, և անմիջապէս նշանաւոր անձինք ամանք ձեռնարկեցին ի նպատակ թշուառաց եղած հրաւերը ի գործ դրնել իրանուն նուիրելով և պատուաւ հանդիսականաց առատ նուէրներ նըշանակելով: Ստիպուով կամ թախանձանք հարկաւոր չէր. զի բոլոր հանդիսականք արդէն քրիստոնէական և եղբայրսիրական ոգւով շարժած՝ պատրաստ էին առատօրէն նուիրել: Սոյն հանդիսին մէջ 15000 դրչի մօտ գումար մը նուիրուեցաւ և 20 չարի ալ ցորեան, և կայ յոյս որ յիշեալ գումարը հեռագնաէ աւելնայ հանդիսին ներկայացող բարեւէր ազգայնոց մասնակցութեամբ: Այս վեհանձն նուիրատուաց անունները պիտի հրատարակուին Խ. ընկերութեան քիչ ատենէն հրատարակելիք տարեկան աւելակացոյցի մէջ: Հանդիսը 4 ժամ տևելէ վերջը Գերապատիւ Երեւանի Արքեպիսկոպոսը անուարտութեամբ վերջացաւ, և հանդիսականները մեկնեցան գոհ և ուրախ իրենց կատարած բարեպաշտական մեծ գործին վրայ:

Խմբագիր, Խնամատար ընկերութիւնն լոկ խօսքով չկրնար իւր շնորհակալեքը յայտնել Վանայ բարեւէր տղազայնոց, զի նոցա այն մեծ գումարը նուիրելով յանձնաւոր կը քաջալերեն զինքն իւր ձեռնարկին մէջ, ինչպէս որ տասնամիակէ ի վեր թէ՛ բարոյապէս և թէ՛ նիւթապէս իրենց ձեռնառութիւնը խնայած չլինելով ընկերութիւնն կրցած է ինն մանուկներ իւր խնամոց ներքև տանուլ, վստաբոյ կը խնդրէ որ բարեհամբար ազգագուտ թերթիդ մէջ անկիւն մը ձորհել սոյն գրութեան:

Խնամատար ընկ. Գործ. Ժողովոյ Ասենապոլի Ատենապոլեա Մարտիրոս Կեօնի-Պան Հաբարձում Երեւան Տեսուչ Հանդիսի Խ. ընկերութեան Տէրբան Արժանեան

Ի Լ Ա Ն

Նիղամիյէն օհողէ քովիտիճը իւրեն չէրայիթը մուգ արբերէսի իլէ միւսայ. եւ օրունաճողը էվէլէն իւրն քըլընան սէքիլ երւզ պին քըլէ Բաթմաթեղին պէհէր գըլէսի քըլք փալայս օլարաք թալիսի էօճտէսմաւէ քալիլը վէ գարարը գամիսի տալի վէրիլիլ օլնաղլէ, թէմուզ րուսինին օլթուզընը բաղար իրթէսի կիւնիլ. ազշամա գատար ուսուլի վէչհ իլէ երւզտէ պէշ թէնկիլին թալիլ րլան ըլարըն Տարի Շուրայի աքբըլիլ կէլ մէլէրի:

28 թէմուզ 1879 Պապը Սերասքէրի

Նիղամիյէն իւրեն մի սոյնեալ օրունմաք իւզըլէ միւնարտասար տէրտէսթ իհրա օլարընա իւրն քըլընըլ օլան էլլի պին քըլէ Գըլընա հանթանըն կէօրիլէն լուղում իւղէրինէ մըքտալը իւզ պին քըլէլէ իսլաղ վէ չէրաթիթը մուքարբերէսի վէչհ իլէ պէհէր քըլէսի լիւրայի Օսմանի երւզ գըշ հիսապը իլէ օլթուզ զրուշտա թալիլ պի իւզէրինտէ քալիլը վէ իւրնը սապըզ վէչհ իլէ իւզում հոն թէմուզըն օլթուզ պիլիննի սալը կիւնիլ քարալը գամիսի միւսամիլէմ պուլունըլ օլարընտան, տահա աղաղը թալիլ օլանըլարըն եէվիլ մէղքըրտէ մաղիլէ լաղիլէ յի ճէլիլէսիտէ աղար նեղալըլէ թի տայիլիլէսիտէ միւրաճառ թ իլլէ մէլէրի իւրն օլուրուր:

28 թէմուզ 1879 Պապը Սերասքէրի

ՇԻՐ-ԲԵՐԻ ԽԱՅՐԻԷԻ ՇՈՂԵՆԱԻՆԵՐՈՒՆ ԵՐՐԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ 1879 ՅՈՒՆԻՍ 1 ԿԻՐԱԿԻ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՁԵՒ ԹՈՒՆԻՍ 31

ԲՈՒՄՈՒՆ ԻՋՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ	Երբ	Թի
40 15	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 32	
41	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 20	
41 30	Բ Ս. Գալուզէն Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 34	
42 30	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 18	
4 15	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 33	
2 15	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 32	
3 15	Բ. և Ս. Գալուզէն Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 20	
4 30	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 34	
5 30	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 33	
6 15	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 4	
8	Բ. և Ս. Գալուզէն Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 19	
10 15	Եկնիստի Կարգի Պէջիք Թար. Եկնիք Սթէն. 22	
Արեւելի Գրքեր		
41	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 25	
11 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 2	
12 45	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 22	
4 15	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 2	
2	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 12	
2 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 25	
3 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 18	
8 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 2	
10	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 12	
10 45	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 2	
Արեւմտի Գրքեր		
40 15	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 12	
41	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 21	
41	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 4	
42	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 17	
4 30	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 19	
3 45	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 21	

4 15	Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 22
8 45	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 25

ԿԱՄՈՒՐՁԵՆ ԵՆՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ	Երբ	Թի
12 15	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 4	
12 30	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 32	
4 30	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 20	
2 30	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 34	
3 45	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 33	
5	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 40	
6 15	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 25	
8	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 22	
9 15	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 32	
10	Բ. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 33	
10 30	Օրթոքս. Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 18	
10 45	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 34	
11 15	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 19	
Արեւելի Գրքեր		
12	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 25	
12 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 2	
4 30	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 12	
2	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 25	
3	Արեւելի Գրքեր Օրթոքս. Պէջիք 18	
7 30	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 2	
9 15	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 12	
10	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 2	
11 15	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 25	
11 40	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 2	
12	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 22	
Արեւմտի Գրքեր		
4 30	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 21	
3	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 22	
9	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 20	
9 45	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 17	
10 30	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 21	
11 15	Պէջիք Բաշար Գանդ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք Եյ, 12	
11 30	Գալուզէն Կարգի Պէջիք Օրթոքս. Պէջիք Սթէն. 5	

Ներկայից էրզր. անպարհապաստան օն պէշ պին գըլէտէն իկիրսի պէշ պին գըլէտէն քատար մահաբու շուտունէսի շուտունէն մուղարբերէսի իլէ միւ պայեա օլունաճաք Թրիլիա զէլթու նըն պէշէր գըլէտի իւզ զըշ օն փա րայա իրայի էօճտէս նոն օլուպ թէմուղու բուսինին օլթուղուննու բա զար իրթէսի կիւնիւ միւնաքատար նըն ինքար իլէ քարարը գալթիսի վէ րիլէճէ ինտէն, իմասարն իմայի օլ րանարըն Եէվի մէջըրիւրտէ Տարի Շուրայի սաքէրիլէ կէլթէրիլէ:

26 թէմուղ 1879 Պապը Սէրասքէրի

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՎՈՒԹԻՒՆՔ

ԱՌԱՋՆՈՐԴ ԽՕՍԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՆԿԻՆԻՆԻՆ ԼԵՁՈՒԻ

Աշխատարկեաց Մ. Պաղտատարեան Հիւսեանց

Անգլիերէն իրօզին գիւրաւ ըն տերանալու և քիչ առնի մէջ խօսիլ սորվելու համար յարմարագոյն և մէկ հատիկ գործի մը կրնայ համարուիլ այս նոր գիրքը, որ 240 էրեսէ բաղ կայեալ է և կը պարունակէ հետեւեալները.

- Մասն Ա. Գերականական կանոններ:
- Մասն Բ. Չորսորդութիւն:
- Մասն Գ. Անգլիերէնի յատուկ ոճեր:
- Մասն Դ. Համառօտ նամականի:
- Մասն Ե. Համառօտ բառարան Հայերէնէ Անգլիերէն:
- Մասն Զ. Համառօտ բառարան Անգլիերէնէ Իւլայերէն:

Արամեան տպարանին 'ի լյա ըն ծայրածայր գործը մաքուր տպագրութեամբ և անգլիական կազմով գեղեցիկ կերպիւ պատրաստուած կը ծախուի ամեն գրավաճառաց խանութները 'ի գին 2 փրանք:

ԲՐԻՏՏՈՆԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆ

Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ Կրեց Գարեգին Վ. Սրբանձմեանց

Երեւոյ տէր

Հայաստանեայց եկեղեցւոյ բաղմարդին վարդապետին երկասիրած սոյն կարևոր դասագիրքը, որոյ առաջին տպագրութիւնը սուղ միջոցի մէջ սպառեցաւ, երկրորդ անգամ 'ի լյա ըն ծայրածայր վերաքննութեամբ Արթ. Հեղինակին:

Սոյն մատենիկը 19 գեղեցիկ պատկերներով 144 էրեսէ կը բաղկանայ և կը ծախուի Եկեղ. Տաճ. Չիլիկիլիքը հաստատէ թիւ 2, Ս. Գուկասեան գըրատողը և ուրիշ գրավաճառաց քով գին 60 փարա արծաթ:



ՍՈՒԹԻՆԻ ՇԻՐՈՐ

Յայտնի է որ երախայք ծնանելէն մինչ երեք տարեկան հասակը գրեթէ շարունակ փորի ցաւ. փորհարութիւն, ստամոքսի անհանգստութիւն, անքուն մնալ, ջրային գրգռութիւն և այլն կունենան, մանաւանդ ակուա հաներու միջոցին, և այս ներգործիւններն ու աւելի կը ստատկանան ամառուան տաք եղանակին: Սութինի Շիրօրը վերոյիշեալ դժուարութեանց ամենուն ալ առաջը կառնէ ու կը բժշկէ, որով երախան կը հանդիս ու կը զօրանայ յարախոթիւն մեծ իւր ծնողաց: Գործածողները շատ գոհ են: Ուղղորդ կրնայ փորձել. գինն առ ժան է. նորածին երախայից կաթիլով կը տրուի, վեց ամիսէն վեր եղողին օրը երեք անգուշի գրգալ. կը ծախուի Կ. Պօլիս Գալաթիա Միլասուէան և ընկերաց Ամերիկացի մաղազան:

ԽՈՐԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻՒՅԵԱՆ
Ի ՏՊԱՐԱՆԻ ՄՍՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ
ՂԱՆԱՅԱՆ ՆՕՐՈ ԽԱՆ

Իրազիրս ամեն օր կը հրատարակուի բաց 'ի կիրակի և տօն օրերէ:

Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտըղճլար Ճատտէսի թիւ 198, Եօրո խան Մասիսի խմբագրատունը: Իսկ դաւառաց մէջ հետեւեալ հոգարարձուաց գրասենեակները.

- ՉՄԻՒՆԻՒՄ. Ստեփան Լ. Ֆ. Տէլեան.
- ՆԻԿՈՄԻՒՄ. Խարթը » Եսկիճեան.
- ՊՐՈՒՍՍ. Ստեփան Լ. Ֆ. Թանկիճեան.
- ՈՒՍՈՍՈՒՄ. Արթ. Տ. Արխատակէս աւագ քահանայ Ֆիլիսեան.
- ԱՐԻՒՆՆՈՒՊՈՒՄ.
- ՍՍՄՍՈՒՄ.
- ՏՐԱՊԵՏՈՒՄ. Ս. Եթմէքճեան Լ. Ֆ. Նախ.
- ՍՄՍՍՈՒՄ.
- ՍՏԵՐԱՍՏԻՒՄ. Նազարէթ Լ. Ֆ. Յ. Խաթանալեանց.
- ԵՒԳՈՒՄ.
- ՔԱՐՔԵՐԻ և ՏԵՐՍՄ. Կերակա Լ. Ֆ. Ս. Գալաճեան.
- ԵՐԶԵՒԱՆ. Թաղէս Լ. Ֆ. Բաղդասարեան.
- ԿԱՐՆԱՆ. Կարապետ » Չաքարեան.
- ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան.
- ՎԱՆ.
- ԲԵՐԻՍ. Սեդրակ » Խարաճեան.
- ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թեփան Լ. Ֆ. Թաղէան.
- ԵՂԻՍԻՍ. Գէորգ Լ. Ֆ. Ոսկերչեան.
- ՄԱՐՍԵ.
- ՖՕՐՇՈՒՄ. Ֆեդոտ աղա Ս. Ֆեդոտեան.
- ՏՓԻՒՄ. Պ. Նիկողոսոս Տ. Գ. Կոնյան.
- ԿՍԻԿԱՍ. Պետրոս աղա Հէլիճեան.

ԻՆՍՏԻՏՍԱՐ ԲԱՆՈՂ ՇՈՂԵՆԱԻՆԵՐԸ

Ժամ	Երբ	Թի
11		11 30
11 30	6 15	11 45
12	7	12 15
12 30	8 15	12 45
1	8 35	1 15
1 25	9 15	1 40
2	9 35	2 15
2 30	10	2 45
2 55	10 25	3 10
3 30	10 45	3 45
4	11 5	4 15
4 30	11 25	4 40
5 5	11 40	5 15
5 45	12	6 10

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Ժամ	Երբ	Թի
11 30	5 25	11 30
12	6	5 25
12 30	6 35	6 25
1	8	8
1 30	8 40	8 45
2	9 20	9 20
2 30	10	10
3 5	10 30	10 30
3 45	11	11 5
4 30	11 30	11 35
5	12	12 5